ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՋՐԱՍՈՒԶԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԿԱՐԱՊԵՏ ՍՈՒՓԻԱՍՅԱՆ

Անվանի գիտնական Ռուբեն Օրբելին ջրասուզակության հարցին նվիրել է մի ուշագրավ աշխատություն՝, որի մեջ նա քննել է հին շրջանի հունա-հռոմեական, միջնադարյան Եվրոպայի և ռուսական ջրասուզակության պատմությունը։ Ուսումնասիրության մեջ, սակայն, նա ոչ մի խոսք չի ասել Արևելքի երկրների ջրասուզակության մասին, ըստ երևույթին ձեռքի տակ չունենալով հայ մատենագրության տվյալները, որոնք ինչ-որ չափով լրացնում են այդ բացը։ Ուստի, հարկ ենք համարում դրանք ուշադրության ներկայացնել։

Ջրասուզակ բառը մեր մատենագրության մեջ հիշված է խորէջ ձևով, որի հոմանիշներն են՝ զեռասուլզը, ծովասուզակը, մխլուճը, սուզակը, սուզորդը, ստորէջը և ստորիջակը։ Պահպանված հայերեն բնագրերում ջրասուզակությունը վերաբերող հակացություններից են՝ բուշտը, ապակին (սրվակ), որոնց մեջ ձեթ է լցվել ջրի հատակում լուսավորությունը ապահովելու համար, և պարունակը՝ ջրասուզազգեստը, որը պատրաստվել է նորածնի փառից։

Աղբյուրներից տեղեկանում ենք, որ ջրասուզակները կատարել են տարբեր հանձնարարություններ՝ խեղդվածներին հանել են ջրից, մասնակցել են ծովամարտերի, մարգարիտներ են հանել օվկիանոսների հատակից և այլն։ Այսպես, օրինակ, Մովսես Կաղանկատվացին վկայում է, որ 851 թ. հայոց իշխան Շապուհ Արծրունուն և մեկ այլ անձնավորության արաբ իշխողները նահատակել են Եփրատ գետում։ Ասորիների Ջափր եպիսկոպոսը խորէջներ է իջեցրել Եփրատ գետը, նրանց ոսկորները գտել ու ամփոփել է իր եկեղեցում. «Եւ ի լնուլ երրորդ հարիւր թուոյն Հայոց [851] լցան սահմանեալ մեղացն տուզանք հաւատացեալ իշխանացն Հայոց և Ադուանից, որք յայսմ ամի կապեալ պարաւանդեալ ըմբռնեցան ի ձեռս տաճկաց եւ տարագրեալք ի տանց իւրեանց՝ յոչ կամաց գնային ի Բազդատ։ Անդ վտանգեցուցեալ սաստէին անօրէնքն թողուլ զհաւատս, յորոց բազումք կորեան զանմահն մահ՝ թողլով զանկապտելի դանձն հաւատոյ սրբոյ։ Իսկ Երանելի ոմն Շապուհ Արծրունի եւ միւս այլ այր ընտիր յազատացն Հայոց՝ յանձն առին զմահ մարտիրոսական եւ ոչ զկեանս սնոտիս։ Յայնժամ տայր հրաման բռնաւորն տաճկաց երկաթի կապանօք գնոսա կենդանւոյն ընկենուլ ի գետն Եփրատ. եւ զաւուրս բազումս ջահք լուսոյ ի վերայ գետոյն երեւեալ, ընդ որ մախացեալ Ամիր Մումինոյ՝ տայ հրաման, զի արք իջեալ ի գետն առցեն զոսկերսն եւ հրով այրեսցեն։ Եւ իջեալ խորիջացն՝ լոյսն աներեւոյթ լինէր, եւ յելանել նոցա ի ջրոյն յուզելոյ, նոյն լոյսն ի լիութեան ջրոյն գայր։ Ապա կոչէ Ամիր Մումին զՋափր ասորեաց և-

---

[1] Профессор Рубен Абгарович Орбели, Исследования и изыскания (Материалы к истории подводного труда с древнейших времен до наших дней), М.—Л., 1947

պիսկոպոսն և հրամայէ յուզել զնշխարս նոցա. եւ եկեալ եպիսկոպոսին յԱզր Եփրատ գետոյն՝ իջուցանէ խորէջս. գտեալ զոսկերս երանելեացն՝ տարաւ յիւրն եկեղեցի եւ կարգեաց յիշատակս գրով»[2]։

Կաղանկատվացու Պատմության գրաբար բնագիրը աշխարհաբարի վերածելիս, խորէջք բառը, ավելի հասկանալի դարձնելու նպատակով, փոխարինվել է ջրասուզակներ նույնիմաստ բառով[3]։ Ինչպես տեսնում ենք, հայ մատենագրության մեջ ջրասուզակների գոյության վերաբերյալ վկայություն կա սկսած 851 թ.։

XI դ. մտածող Գրիգոր Մագիստրոսն արաբ Իբրահիմ ամիրային ուղղած իր պատասխան նամակում գրել է. «Եւ արդ ընծայեմք քեզ նպաստ ոչ զնուամիզմատայն արաբացի և ոչ զմաքրափառն ի թալատայ արտակիտեալ ստորիջացն ի խորս»[4], ուր խոսքը ծովից մարգարիտ հանող ջրասուզակների մասին է։

XII դ. բանաստեղծ Ներսես Շնորհալին իր հանելուկներից մեկում գործածել է ջրասուզակ բառի մխլուճ հոմանիշը, որը, թերևս, գոյություն է ունեցել Կիլիկիայի խոսակցական լեզվում.

«Կայր փախուցեալ մի խիստ գիտուն,
Գնաց մխլուճ ի մեջ ծովուն,
Արար իւրէն գնայուն տուն,
Հօն աղօթեր օրն ի բուն»[5]։

XII դ. մատենագիր Միխայել Ասորու «Ժամանակագրութեան» հայերեն թարգմանության համառոտ և ընդարձակ խմբագրություններում ևս խոսք կա ջրասուզակների վերաբերյալ։ Թերենք համառոտ խմբագրության համապատասխան հատվածը. «Եւ թագաւորեաց Աբու Սահլ [833—842] եղբայր նորա, որ եւ այրեաց զամենայն շինուածսն եւ գնաց ի Բաղդատ։ Եւ եկին առ նա արք ի Բասրայ եւ ասեն. կղզի մի է ի մէջ ծովուն, որ կոչի Պարսից ի տեղւոջն, ուր խառնին Տիգրիս եւ Եփրատէս ի ծովն. եւ է անգ բերդ մի միշտ ապստամբանոց լեալ. եւ վնասեն զվաճառականսն, որ կամին գնալ ի Հնդիկս եւ յԵթիովպիայ։ Եւ առաքեաց թագաւորն յԵգիպտոս եւ ի Սաբայ եւ ետ ածել անտի արս արուեստաւորս, ծովամուխս, հնարիմացս, որք ծածկէին զզգայարանս սաղմով տղայոյ, եւ առեալ ձէթ ապակով ընդ ինքեանս մխէին ի խորն. եւ ուր որ պիտէր ելանէին։ Եւ գնացին հանդերձ բազմութեամբ զօրաց լցեալ ի նաւս, եւ ելին բնակիչքն բերդին կռուել ընդ նաւսն. եւ խորամուտքն ծովասուզեալք ի

---

2 «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս. 1912, էջ 379—380։

3 Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 260։

4 «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», բնագիրն առաջաբանով և ծանոթագրություններով առաջին անգամ լույս ընծայեց Կ. Կոստանյանցը, Այեքսանդրապոլ, 1910, էջ 202։

5 Ա. Շ. Մնացականյան, Հայ միջնադարյան հանելուկներ, Երևան, 1980, էջ 234, 349։

ներքոյ նոցա ելին ի դուրս առ դրան դղեկին, եւ գտին զդուռն ի բացս եւ զարս բերդին, զի կոուէին նաւովք ընդ զօրս տաճկաց։ Եւ առին զբերդն եւ քանդեցին ի հիմանց եւ զարսն սպառեցին եւ թարձաւ խոշն այն. եւ եղեւ դիւրութիւն յանցս ուղեւորացս[6]։ Նկատելի տարբերություն ունենալու պատճառով, բերենք նաև նույն հատվածը ընդարձակ խմբագրությունից. «Եւ թագաւորեաց Աբու Սահակ [833—842] եղբայր նորա, որ եւ այրեաց զշինուածս քաղաքին եւ զամենայն կալմուածսն եւ գնաց ինքն ի Բուղդատ եւ հնազանդեաց բռնութեամբ, թէպէտ ոչ էին ընդ նմա։ Եւ յայնժամ եկին ի Բասրայ եւ տրտնջեցին զկզուոյն, որ կոչի Բանատի, թէ միշտ ապստամբանոց է, եւ կոտորեն զվաճառականս, որ գնան յԵթովպիայ եւ ի Հնդիկս։ Եւ կա կզզին այն ի մէջ ծովուն հանդէպ տեղւոյն ուր խառնի Եփրատ եւ Տիգրիս ի ծովն, որ կոչի Պարսից։ Եւ առաքեաց թագաւորն զօրս ի վերայ նորա եւ ոչինչ կարացին առնել վասն ամրութեան տեղւոյն եւ հնարիմացութեան նոցա եւ քաջութեան արանցն. ապա յայնժամ սառաքեաց թագաւորն յԵգիպտոս եւ ի Սաբա եւ ետ ածել անտի արուեստաւորս եւ ծովամուտք, որ ծածկէին զզայարանսն սաղմով մանկանց եւ առնալ ձէթ փշտով լնուն ի ծովն, եւ որ տեղաց հանգիպ պիտէր մտանէին ի ծովն եւ ելանէին։ Եւ առաքեաց զնոսա ընդ զօրսն, զի յորժամ ելցեն բնակիչք կզզւոյն նաւօք ի կռիւ ընդ նասսն տաճկաց, մտցեն նոքա յանկարծակի ի քաղաքն եւ այրեսցեն զնա, զոր եւ արարին իսկ... եւ բարձան ապստամբքն եւ լինէր դիւրութիւն վաճառականաց եւ երթեւեկաց»[7]։ Սաբան, ըստ հնագետների, տարբեր տեղադրություն ունի. նրան է նույնացնում Եգիպտոսի և Արաբական թերակղզու տարածքում[8]։ Ինչպես տեսնում ենք, Միխայել Ասորու «ժամանակագրության» տարբեր խմբագրություններից բերված հատվածներում կան «արս արուեստաւորս, ծովամուխս, հնարիմացս», «ձէթ», «ապակի», «փուշտ», «տղայոյ սաղմն», «սաղմ մանկան» հասկացությունները, որոնք վկայում են, որ ձէթի, սրվակի, փուշտի և պարունակի կամ նորածնի փառից պատրաստված հարմարանքի միջոցով ջրասուզակները մասնակցել են ծովամարտերի։

XIII դ. Կիլիկիայի հայոց իշխան Հեթում Կոռիկոսցու երկում խոսվում է Ջինական ծովում տեղի ունեցած մի դեպքի մասին, ուր վճռորոշ դեր են կատարել ջրասուզակները. «Յետ սակաւ ժամանակի մեռաւ Ուխադա խան, եւ պայազատեաց զինքնակալութիւն նորա որդի նորին Ճինոն, որ եղեւ սակաւակեաց. եւ յաջորդեաց նմա ազգական ոմն նորա կոչեցեալ Մանգոյ խան, որ գտաւ հզորացեալ յոյժ. եւ էարկ ընդ տէրութեամբ զբազում գաւառս։ Եւ իբրեւ մեծացաւ սիրտ նորա, անցեալ ընդ ծովն Կաթայի (իմա՝ Ջինական ծովը—Կ. Ս.) շոքաւ առնուլ կղզի մի. եւ յորժամ կայր ի պաշարման անդ կղզւոյն, արք կողմանցն այնոցիկ, որ են խորագէտք յոյժ եւ ճարտարք, առաքեցին արս որ ի ծածուկ միջամուխ եղեն ի ծովն եւ այնչափ տոկացին ի ներքոյ նաւին, յորում էր Մանգոյ, մինչեւ գիշերայն առ փոքր-փոքր գտան մտեալք ընդ ծակտ

---

6 «Տեառն Միխայէլի պատրիարքի Ասորւոց ժամանակագրութիւն», յԵրուսաղէմ, 1870, էջ 377։

7 «ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի», յԵրուսաղէմ, 1871, էջ 367—368։

8 «Բառարան սուրբ գրոց հանգերձ պատկերոք, աշխարհացուցոք և տախտակոք», Կոստանդնուպոլիս, 1881, էջ 474։

ի նաւ անդր, զոր ոչ ոք կարծէր, մինչեւ սուզաւ նաւն ի խորս եւ Մանգոյ խան անդէն հեղձաւ»[9]։

XIV դ. մտածող Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Յովհաննու Աւետարանի» երկում ջրասուզակների և նրանց միջոցով ձեռք բերվող մարգարիտների մասին հետևյալ հետաքրքրական տեղեկությունները կան. «Եւ վասն ականց պատմեն, թէ յաշխարհին Հնդկաց է ձոր խորին և դժվարին մարդկան կոխելոյ եւ վասն ջերմութեան տեղւոյն եւ ի զաւրութենէ աստեղաց գոյանան։ Եւ թագաւորք հնարեալ շաղիղ գառին, կամ ոչխարի թաւալեն ի ձորն եւ փակին ակունքն ի նա, եւ արծիւք եւ անկեղք տեղւոյն հանեն ի բոյնն կերակուր ձագացն, եւ ակունք մնան ի տեղին։ Եւ թագաւորք ի ձեռն մահապարտ արանց առնուն զակունքն զանազան։ Այլեւ ասեն, թէ արծիւքն զակունս ի բոյնս իւրեանց շարեն, զի մի վնասեսցին յանձիցն... նոյնպէս եւ խոյէշն, որ հանէ զմարգարիտն, չորս ունի դժուարութիւն։ Նախ՝ խորութիւն ծովուն, երկրորդ՝ կուտակեալ ալիք. երրորդ՝ սաստիկ խռովութիւն, չորրորդ՝ թանձր խտութիւնն։ Եւ զինքն տկար ասելով զերծանի ի գործոյն։ Եւ սէրն սերտ մնա սիրելոյն։ Այսպէս ասեն վասն մարգարտաց, որ լինին ի ծովն Հնդկաց, որ այժմ կոչի Քեշուրահրայ։ Անձրեւն, որ գայ ի մայիս ամիս, ոստրէոս ձուկն գայ երեսն եւ բանայ զպատեանսն եւ առնու զկաթ անձրեւուն եւ դարձեալ խփէ եւ սնուցանէ յինքեան։ Եթէ բազում ընկալաւ զշիթս, լինի մանր եւ թէ՝ սակաւ լինի մեծ մարգարիտ։ Եւ թէ ծեր է դեղնագոյն լինի եւ թէ տղա՝ սպիտակ, եւ թափէ յատակս ծովուն։ Եւ զխորէշն ասեն, թէ զանդրանիկ ծնիցելոյն զփառն ածէ զերեսաւքն, զի թափանցէ, հանէ զշունչն որպէս յարգանդին, եւ արգիլէ զջուրն. եւ զբուշտն լցեալ ձէթով իջանէ ի խորն եւ լուսով նորին ժողովէ զմարգարիտս եւ յետոյ պատառէ, զի ձէթն ելցէ եւ ընդ շողն նորա ելանէ յերեսս ծովուն»[10]։ Տաթևացու այս խոսքում ևս առկա են խորէշ, փառ, ձեթ, բուշտ հասկացությունները, միայն թե այս դեպքում դրանք կապված են ծովի խորքից մարգարիտներ հանելու հետ։ Տաթևացու տեղեկությունները, թեև զրուցախառը, կարևոր արժեք են ներկայացնում այն առումով, որ գրանցում նկատելի են բնագիտության, գիտնկոլոգիայի, օպտիկայի, օվկիանոսագիտության, կենդանաբանության, աստղագիտության կապերի առկայությունը։

Ջրասուզակության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդել նաև XIV—XV դդ. մատենագիր Մատթեոս Ջուղայեցին։ Նա Գրիգոր Տաթևացուն ուղղած ներբող-դամբանականում գրել է. «Խորէշք չորս իւիք գտանեն զմարգարիտն. նախ, զանձանց կորուստն յանձն առնուն, երկրորդ՝ գինս արեան առնուն, երրորդ, ձեթով, չորրորդ, պարունակաւ»[11]։

Բուսական յուղի՝ ջրում լուսարձակելու հատկության մասին վկայություն կա նաև XI դ. մատենագիր Արիստակես Լաստիվերցու մոտ։ Նա գրում է. «Իսկ ի լուսաւորութեան աւուրն, յորում օրէն է քրիստոնէից թագաւորաց եւ իշխանաց ի բարեպաշտութեան կացելոց, զի ընդ առաջնորդս եկեղեցւոյ հաւասարեն գանձինս, եւ հետի ոտիւք ի ջուրս իջանեն, եւ անդ կատարեն զխորհուրդ տէրունական մկրտութեանն՝ արդ ի հանդիպման աւուրն՝ հրամայէ թագաւորն հայրապետին Պետրոսի օրհնել զջուրն ըստ մերոյ կանոնիս եւ հոռոմոց եպիս-

9 «Հեթում Պատմիչ Թաթարաց», Վենետիկ, 1842, էջ 39։
10 Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 1394, թ. 2բ-3բ։
11 Նույն տեղում, ձեռ. № 1400, թ. 188ա։

կոպոսացն, որ անդ դիպեցան՝ ըստ իւրեանց կանոնին։ Եւ ի հեզուլ հայրապետին զտէրունական իւղն ի ջուրն, ցնցուցեալ լուսոյ ճառագայթից յանկարծակի ծագեաց ի ջուրցն, զոր տեսին առհասարակ ամենեքեան եւ փառաւորեցին զԱստուած, եւ բարձրացաւ եղջիւր հաւատոյս մերոյ»[12]։ Այստեղ մեզ համար կարևորը իրողության ճշմարտացի նկարագրությունն է և ոչ թե նրա մեկնաբանությունը մատենագրի կողմից։

Այսպիսով, հայկական աղբյուրներում ջրասուզակության վերաբերյալ եղած վկայությունները հաստատում են հայերենում առկա որոշակի հասկացությունների (խորէջ, գետասույզ, ծովամուխ, սրվակ կամ բուշտ ձեթով լի, պարունակ) գործածությունը դեռևս IX—XV դարերում, ջրասուզակության, իբրև մասնագիտության, տարածված լինելը Եգիպտոսում, Միջագետքում, Մերձավոր արևելքում, Հայաստանում, Պարսկաստանում, Հնդկաստանում և Չինաստանում։ Ջրասուզակության վերաբերյալ ներկայացվող փաստերով բացահայտվում են նաև միջնադարյան շրջանի մի շարք գիտությունների փոխադարձ կապերը։

СВЕДЕНИЯ АРМЯНСКИХ ИСТОЧНИКОВ О ПОДВОДНОМ ТРУДЕ

КАРАПЕТ СУКИАСЯН

Резюме

Свидетельства, касающиеся подводного труда и содержащиеся в армянских источниках (Мовсес Каганкатваци—X в., Григор Магистрос—XI в., Нерсес Шнорали—XII в., Хетум Историк—XIII в., Григор Татеваци—XIV в., Маттеос Джугаеци—XV в.), подтверждают употребление определенных понятий, наличествовавших в армянском языке (водолаз, растительное масло, пузырь, склянка, плацента) еще в IX—XV вв., а также распространение подводного труда как специальности в Египте, Месопотамии, на Ближнем Востоке, в Армении, Персии, Индии и Китае. Подводным трудом занимались с различными целями: спасение утопающих, участие в морских боях и извлечение жемчуга со дна морей, океанов. Благодаря приводимым впервые фактам, касающимся подводного труда, выявляются связи между различными науками средневековой эпохи: естествознанием, гинекологией, зоологией, астрономией.

---

12 «Պատմութիւն Արիստակէսի Լաստիվերտցւոյ», աշխատասիրությամբ՝ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 31—32